

1. Երաժշտական մասնագիտությունների գծով.

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳՆ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների երաժշտական մասնագիտությունների գծով կարող են ընդունվել հիմնական ընդհանուր կամ միջնակարգ /լրիվ/ ընդհանուր կրթություն ունեցող անձինք:
2. Ըստ մասնագիտությունների դիմորդներն ընդունելության քննություններ են հանձնում հետևյալ մասնագիտական առարկաներից.

Մասնագիտության անվանումը	Քննություններ		
Գործիքային կատարողական արվեստ			
Դաշնամուր	Մասն.	Սոլֆ. ե. գ	
Լարային նվագարաններ	Մասն.	Սոլֆ. ե. գ	
Փողային և հարվածային նվագարաններ	Մասն.	Սոլֆ. ե. գ	
Ժողովրդական նվագարաններ	Մասն.	Սոլֆ. ե. գ	
Երգեցողություն	Մասն.1	Մասն.2	
Երգչախմբավարություն	Սոլֆ. ե. գ	Դաշն.	
Երաժշտության տեսություն	Սոլֆ. ե. գ	Ե. գրագ.	Դաշն.
Էստրադային երաժշտարվեստ	Մասն.1	Մասն.2	
Պարարվեստ	Մասն.		
Դիզայն	Գծն.	Գնն.	Կոմպ.
Դերասանական արվեստ	Մասն.		

### Օգտագործված հապավումներ

- Մասն - մասնագիտություն
- Սոլֆ.-սոլֆեջիո և երաժշտական գրագիտություն
- Սոլֆ.-սոլֆեջիո
- Ե.գրագ.-երաժշտական գրագիտություն
- Դաշն-դաշնամուր
- Գծն-գծանկար
- Գնն -գունանկար
- Կոմպ -կոմպոզիցիա

3. Մասնագիտական առարկաների քննությունները գնահատվում են 10-միավորային համակարգով: Դրական են համարվում «5» և դրանից բարձր միավորները:
4. «Մասնագիտություն», ինչպես նաև «Երգեցողություն» մասնագիտության «Մասնագիտություն-1» առարկաները նախատեսում են ծրագրի կատարում համապատասխան մասնագիտությունից՝ սույն պահանջների 2-րդ մասի համաձայն: «Երգեցողություն» մասնագիտության «Մասնագիտություն -2» առարկան նախատեսում է դիմորդի երաժշտական լսողության, ռիթմի զգացողության և հիշողության ստուգում:
5. «Գործիքային կատարողական արվեստ» մասնագիտության /«Դաշնամուր», «Լարային նվագարաններ», «Փողային և հարվածային նվագարաններ», «Ժողովրդական

նվազարաններ» մասնագիտությունների/, «Երգչախմբային դիրիժորություն» մասնագիտության համար նախատեսված «Սուֆեջիո և երաժշտական գրագիտություն» առարկան, ինչպես նաև «Երաժշտության տեսություն» մասնագիտության «Սուֆեջիո» և «Երաժշտական գրագիտություն» առարկաները բաղկացած են երկու մասից՝ գրավոր և բանավոր, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5-միավորային համակարգով: Քննության վերջնական գնահատական է համարվում երկու մասերից ստացած գնահատականների հանրագումարը: Դրական են համարվում «հինգ» և դրանից բարձր միավորները:

6. «Գործիքային կատարողական արվեստ» /«Դաշնամուր», «Լարային նվագարաններ», «Փողային և հարվածային նվագարաններ», «Ժողովրդական նվագարաններ»/ և «Երգչախմբավարություն» մասնագիտությունների գծով, «Սուֆեջիո և երաժշտական գրագիտություն» առարկայի քննության անցկացման համար նախատեսվում է հետևյալ կարգը. սկզբից անց է կացվում քննության գրավոր մասը /երաժշտական թելադրության ձևով/. ապա նույն օրը բանավոր մասը:

7. «Երաժշտության տեսություն» մասնագիտության համար սահմանվում է «Սուֆեջիո» և «Երաժշտական գրագիտություն» առարկաների քննությունների անցկացման հետևյալ կարգը.

- առաջին օրը՝ երաժշտական թելադրություն «Սուֆեջիո» առարկայից և գրավոր աշխատանք «Երաժշտական գրագիտություն» առարկայից,
- երկրորդ օրը՝ բանավոր հարցումներ «Սուֆեջիո» և «Երաժշտական գրագիտություն» առարկաներից,

8.«Սուֆեջիո և երաժշտական գրագիտություն», «Սուֆեջիո» և «Երաժշտական գրագիտություն» առարկաների քննությունների գրավոր /առաջին/ մասից անբավարար գնահատական ստացած դիմորդներին թույլատրվում է հանձնել նաև քննության բանավոր /երկրորդ/ մասը:

## II. ՔՆՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐՆ ԸՍՏ

### ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ

#### 1. ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

## ԴԱՇՆԱՄՈՒՐ

Դիմորդները պարտավոր են կատարել.

ա/ եռաձայն բնույթի պոլիֆոնիկ մեկ ստեղծագործություն,

բ/ տարբեր բնույթի տեխնիկայի երկու էտյուդ,

գ/ խոշոր ձևի մեկ ստեղծագործություն. ռոնդո, վարիացիաներ, սոնատի կամ կոնցերտի մեկ-երկու մաս /առաջինը կամ երկրորդն ու երրորդը/,

դ/ կանտիլենային բնույթի մեկ պիես:

Քննական հանձնաժողովը կարող է լրացուցիչ պահանջել գամմաների և արպեջիոների կատարում:

## *ԼԱՐԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ*

Դիմորդները պարտավոր են կատարել.

### Զութակի դասարան

- ա/ եռօկտավ երկու գամմա /մաժոր և մինոր/ չափավոր շարժմամբ /լեգատոյի 4,8,12 և 24 հնչյուններով/ և արպեջիո /լեգատոյի 1 և 2 հնչյուններով/,
- բ/ մաժոր և մինոր գամմաներ տերցիայով, սեքստայով և օկտավայով՝ առաջին երեք պոզիցիայի սահմաններում /լեգատոյի 1 և 2 հնչյուններով/ չափավոր շարժմամբ,
- գ/ տարբեր բնույթի տեխնիկայի երկու էտյուդ,
- դ/ խոշոր ձևի մեկ ստեղծագործություն. սոնատի կամ կոնցերտի երկու մաս /առաջինը կամ երկրորդն ու երրորդը/,
- ե/ մեկ պիես /ցանկալի է՝ վիրտուոզ բնույթի:

### Այտի դասարան

- ա/ եռօկտավ երկու գամմա /մաժոր և մինոր/ չափավոր շարժմամբ /լեգատոյի 4,8,12 և 24 հնչյուններով/ և արպեջիո /լեգատոյի 1 և 2 հնչյուններով/,
- բ/ մաժոր և մինոր գամմաներ տերցիայով, սեքստայով և օկտավայով՝ առաջին երեք պոզիցիայի սահմաններում /լեգատոյի 1 և 2 հնչյուններով/ չափավոր շարժմամբ,
- գ/ տարբեր բնույթի տեխնիկայի երկու էտյուդ,
- դ/ խոշոր ձևի մեկ ստեղծագործություն. սոնատի կամ կոնցերտի մեկ-երկու մաս /առաջինը կամ երկրորդն ու երրորդը/,
- ե/ մեկ պիես /ցանկալի է՝ վիրտուոզ բնույթի:

### Թավջութակի դասարան

- ա/ եռօկտավ երկու գամմա /մաժոր և մինոր/ լեգատոյի 4, 8 և 16 հնչյուններով և արպեջիո՝ չափավոր շարժմամբ,
- բ/ մաժոր և մինոր գամմաներ տերցիայով, սեքստայով և օկտավայով /լեգատոյի 1 և 2 հնչյուններով/ չափավոր շարժմամբ,
- գ/ տարբեր բնույթի տեխնիկայի երկու էտյուդ,
- դ/ խոշոր ձևի մեկ ստեղծագործություն. սոնատի կամ կոնցերտի մեկ-երկու մաս /առաջինը կամ երկրորդն ու երրորդը/,
- ե/ մեկ պիես:

### Կոնտրաբասի դասարան

- ա/ մեկ գամմա,
- բ/ մեկ էտյուդ,
- գ/ տարաբնույթ երկու պիես կամ խոշոր ձևի ոչ բարդ ստեղծագործություն:

## Տավիդի դասարան

ա/ երկու գամմա /մաժոր և մինոր/ մինչև 4-5 նշան բանալիում, չափավոր շարժմամբ և մեծ արպեջիոներ՝ ձեռքերի հաջորդականությամբ,  
բ/ մեկ էտյուդ,  
գ/ տարաբնույթ երկու պիես /մեկը՝ դասական կոմպոզիտորի/:

# ՓՈՂԱՅԻՆ ԵՎ ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ

Դիմորդները պարտավոր են կատարել.

## Փողային նվագարանների դասարան

ա/ երկու գամմա /մաժոր և մինոր/ մինչև 4 նշան բանալիում, ստակատո և լեգատո. համաչափ շարժմամբ և արպեջիոներ,  
բ/ մեկ էտյուդ,  
գ/ մեկ-երկու պիես /այդ թվում՝ կանտիլենային բնույթի/ կամ ցիկլային ստեղծագործության մասեր:

## Հարվածային նվագարանների դասարան

### Քսիլոֆոնով կատարել.

ա/ գամմաներ /մաժոր և մինոր/ մինչև 4 նշան բանալիում, համաչափ շարժմամբ և արպեջիոներ,  
բ/ մեկ էտյուդ,  
գ/ մեկ-երկու պիես կամ ցիկլային ստեղծագործության մասեր:

### Փոքր թմբուկով կատարել.

ա/ ռիթմիկ ֆիգուրներ /երկկոտորակներ, եռակոտորակներ, ռիթմիկ կոմբինացիաներ/,  
բ/ մեկ-երկու էտյուդ:

# ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ

Դիմորդները պարտավոր են կատարել.

## Քանոնի, թառի, քյամանչայի, ուդի, կիթառի, ակորդեոնի դասարան.

ա/ մեկ էտյուդ,  
բ/ երեք պիես /որից մեկը՝ ցանկալի է մեծածավալ բնույթի/:

## Դուդուկի, բլուլի, շվիի դասարան

ա/ երկու հայկական ժողովրդական մեղեդի /մշակումներ/  
բ/ երկու ռիթմիկ ստեղծագործություն:

## Դիուի, սանթուրի դասարան

ա/ ռիթմիկ պատկերներ /տարբեր բնույթի/

## **ԵՐԳԵՅՈՂՈՒԹՅՈՒՆ**

Դիմորդները պետք է դրսևորեն անհրաժեշտ ձայնային և երաժշտական տվյալներ, ունենան առողջ ձայնային ապարատ, երաժշտական լսողություն, ռիթմի զգացողություն և հիշողություն: Ընդունվողները չպետք է ունենան կայուն խոսակցական, ինչպես նաև մասնագիտական գործունեությանը խանգարող՝ արտահայտված ֆիզիկական թերություններ: Դիմորդները պետք է անցած լինեն բժշկական ստուգում ֆոնիատորի և լարինգոլոգի մոտ:

### Դիմորդները պարտավոր են կատարել.

ա/ տարբեր կոմպոզիտորների երկու-երեք ստեղծագործություն /երգ, ռոմանս, թեթև արիա/,

Ժող.երգեցողության գծով 2 ժող. երգ, հայ կոմպոզիտորի մեկ ստեղծագործություն,  
բ/ արտասանել բանաստեղծություն, առակ կամ հատված գեղարվեստական որևէ երկից:

## **ԵՐԳՉԱԽՄԲԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

Դիմորդներն պարտավոր են.

1. Գիտենալ նոտավորման ընդունված կանոնները և նշանները, հնչյունների տառային անվանումները, օկտավաների անվանումները դաշնամուրի ստեղնաշարի վրա:
2. Կարողանալ դաշնամուրով նվագել /անվանելով հնչյունները/ միևնույն և մաժոր ցանկացած գամմա: Անվանել մաժոր և միևնույն ցանկացած տոնայնության բանալու նշանները:
3. Գիտենալ տոնայնությունների կվինտային շրջանը, զուգահեռ, համանուն տոնայնությունները:
4. Հանձնարարված հնչյուններից և տոնայնության մեջ կառուցել և որոշել ինտերվալներ /մեծ,փոքր,մեծացված,փոքրացված/:
5. Հանձնարարված հնչյուններից և տոնայնության մեջ կառուցել և որոշել ակորդներ /մաժոր, միևնույն, մեծացված, փոքրացված/, մաժոր և միևնույն սեքստակորդներ և կվարսեքստակորդներ, Դ/7 և դրա շրջվածքները, ձգտող սեպտակորդները: Տոնայնության մեջ և տվյալ հնչյունից կարողանալ լուծել Դ/7 շրջվածքներով և ձգտող սեպտակորդները:

# Երաժշտության տեսություն

Դիմորդները քննություն են հանձնում «Դաշնամուր», «Լարային նվագարաններ» /ջութակ, ալտ. թավջութակ/ մասնագիտությունների համար սահմանված պահանջների համաձայն. սակայն դրա հետ մեկտեղ նրանք պետք է հանդես բերեն երաժշտական դպրոցի սուֆեջիոյի ծրագրի առավել խոր իմացություն և ավելի ազատ տիրապետեն դասընթացի գործնական հմտությունների /լսողական վերլուծություն, ինտերվալների երգեցողություն, ակորդների երգեցողություն՝ լուծումներով և սուֆեջիոյի օրինակներով թերթից, ինտերվալների և ակորդների կառուցումներ և լուծումներ դաշնամուրի մոտ, կողմնորոշում տոնայնության մեջ և այլն/:

Բացի թելադրությունից /ավելի բարդ, քան «Դաշնամուր», «Լարային նվագարաններ» մասնագիտացումների համար/, սուֆեջիոյի և երաժշտական գրագիտության բանավոր քննություններից, ընդունվողները գրավոր աշխատանք են կատարում երաժշտական գրագիտությունից, որն ընդգրկում է.

1. տրանսպոզիցիայի օրինակ,
2. ինտերվալների և ակորդների կառուցում՝ հանձնարարված հնչյունից,
3. խմբավորում,
4. տոնայնության մեջ ինտերվալների և ակորդների որոշում և կառուցում,
5. քրոմատիկ գամմայի կառուցում /մաժոր և մինոր/,

Գրավոր աշխատանքի կատարման համար հատկացվում է 45 րոպե:

## ԷՍՏՐԱԴԱՅԻՆ ԵՐԱԺՇՏԱՐԿԵՍ

Դիմորդները պետք է դրսևորեն անհրաժեշտ ձայնային և երաժշտական տվյալներ, ունենան առողջ ձայնային ապարատ, երաժշտական լսողություն, ռիթմի զգացողություն և հիշողություն: Ընդունվողները չպետք է ունենան կայուն խոսակցական, ինչպես նաև մասնագիտական գործունեությանը խանգարող՝ արտահայտված ֆիզիկական թերություններ: Դիմորդները պետք է անցած լինեն բժշկական ստուգում ֆոնիատորի և լարինգոլոգի մոտ:

Դիմորդները պարտավոր են կատարել.

ա/ տարբեր կոմպոզիտորների երկու-երեք ստեղծագործություն /երգ, ռոմանս, թեթև արիա/,

Ժող.երգեցողության գծով 2 ժող. երգ, հայ կոմպոզիտորի մեկ ստեղծագործություն, բ/ արտասանել բանաստեղծություն, առակ կամ հատված գեղարվեստական որևէ երկից:

## 2. Սուֆեջիո և երաժշտական գրագիտություն

«Դաշնամուր», «Լարային նվագարաններ» /ջութակ, ալտ. թավջութակ/, «Երգչախմբային դիրիժորություն» մասնագիտությունների գծով ընդունվողների համար սուֆեջիոյից և երաժշտական գրագիտությունից քննական պահանջները սահմանվում են մանկական երաժշտական դպրոցի 7-ամյա ուսուցման ծրագրի ծավալով, իսկ «Լարային նվագարաններ» /կոնտրաբաս, տավիղ/, «Փողային և հարվածային նվագարաններ», «Ժողովրդական նվագարաններ» մասնագիտությունների գծով ընդունվողների համար 5-ամյա ուսուցման ծրագրերի ծավալով:

### 2.1 Սուֆեջիո

«Դաշնամուր», «Լարային նվագարաններ»  
/ ջութակ, ալտ. թավջութակ/,  
«Երգչախմբավարություն»

Դիմորդներից պահանջվում է.

1. Գրել միաձայն թելադրություն /25 րոպեի ընթացքում/ 8 տակտ ծավալով, մաժոր և մինոր տոնաձայնություններով, ոչ բարդ ռիթմով և քրոմատիզմով. չափերը՝ 2/4, 3/4, 4/4, թելադրվում է 10 անգամ: Ռիթմական դժվարություններ, սինկոպաների պարզ տեսակներ, տրիոլներ, կետո նոտաներ, տասնվեցերորդականներ:
2. Երգել գամմա մաժոր /բնական և հարմոնիկ/, մինոր/բնական, հարմոնիկ և մելոդիկ/:
3. Երգել տոնայնության մեջ.  
ա/ աստիճաններ.  
բ/ ինտերվալներ լուծումներով /դիատոնիկ, բնորոշ, տրիտոններ/,  
գ/ ակորդներ /գլխավոր աստիճանների եռահնչյուններն իրենց շրջվածքներով, Դ/7 և նրա շրջվածքները լուծումներով, Դ/7 փոքրացված և փոքր ձգտող լուծումներով, 2/7/:
4. Երգել հնչյունից վեր ու վար առանձին ինտերվալներ և ակորդներ /նշված 3ա և 3բ կետերում/,  
5. Լսողությամբ որոշել.  
ա /լադեր /երկու տեսակ մաժոր, երեք տեսակ մինոր/ առանձին տետրախորդներ, աստիճաններ,  
բ/ ինտերվալներ և ակորդներ հնչյունից /3-րդ կետում նշված ինտոնացիոն վարժությունների համապատասխան/,

գ/ ինտերվալներ և ակորդներ տոնայնության մեջ առանձին և հաջորդաբար /4-6 ինտերվալ, 3-4 ակորդ/:

**«Լարային նվագարաններ» /կոնտրաբաս, տավիղ/,  
«Փողային և հարվածային գործիքներ»,  
«Ժողովրդական նվագարաններ»**

Դիմորդները պարտավոր են.

1. Գրել միաձայն թելադրություն /30րոպեի ընթացքում/ 8 տակտ ծավալով, դիատոնիկ, բնական մաժորով կամ մինորի տեսակներից մեկով. չափերը 2/4 է, թելադրվում է 12 անգամ: Ռիթմական դժվարություններ. կես նոտաներ կետով, քառորդներ, ութերորդականներ, քառորդ կետով և ութերորդական, չորս տասնվեցերորդական, ութերորդական կետով և տասնվեցերորդական:
2. Երգել գամմա. մաժոր /բնական/, մինոր /հարմոնիկ, մելոդիկ/ մինչև երկու նշան բանալիում:
3. Երգել տոնայնության մեջ.  
ա/ աստիճաններ,  
բ/ ինտերվալներ լուծումներով /մաքուր, մեծ փոքր/,  
գ/ակորդներ /գլխավոր աստիճանների եռահնչյուններն իրենց շրջվածքներով, Դ/7 և դրա շրջվածքները լուծումներով/:
4. Երգել հանձնարարված հնչյունից վեր ու վար ինտերվալներ և ակորդներ /նշված 3բ և 3գ կետերում/:
5. Լսողությամբ որոշել.  
ա/ լադեր /մաժոր և մինոր երեք տեսակի/ առանձին տեստախորդներ, աստիճաններ,  
բ/ ինտերվալներ և ակորդներ հանձնարարված հնչյունից /համապատասխան ինտոնացիոն վարժություններ նշված 3-րդ կետում/,  
գ/ ինտերվալներ և ակորդներ տոնայնության մեջ առանձին և հաջորդաբար /3-4 ինտերվալ, 2-3 ակորդ/:

**2.2. Երաժշտական գրագիտություն  
«Դաշնամուր», «Լարային նվագարաններ»  
/ջութակ, ալտ. թավջութակ/**

Դիմորդները պարտավոր են.

1. Գիտենալ նոտավորման ընդունված կանոնները և նշանները, հնչյունների տառային անվանումները, օկտավաների անվանումները դաշնամուրի ստեղնաշարի վրա:
2. Կարողանալ դաշնամուրով նվագել ջութակի և բասի բանալիներով գրված նոտաներ:
3. Գիտենալ չափի հիմնական տեսակները: Կարողանալ տևողությունները խմբավորել պարզ տակտերի մեջ:
4. Դաշնամուրով նվագել /անվանելով հնչյունները/ ցանկացած մաժոր /երկու տեսակի/ և մինոր /երեք տեսակի/ գամմաներ: Անվանել մաժոր և մինոր ցանկացած տոնայնության բանալու նշանները, տոնայնությունների տառային նշանակումները: Գամմային տվյալ աստիճանով /գլխավոր և հարակից/ որոշել մաժոր և մինոր տոնայնության տոնիկան:
5. Գիտենալ տոնայնությունների կվինտային շրջանը, զուգահեռ, համանուն և էնհարմոնիկ տոնայնությունները:
6. Կառուցել և որոշել ինտերվալները օկտավայի սահմանում /մաքուր, մեծ, փոքր, տրիտոններ, բնորոշներ/: Էնհարմոնիկ եղանակով փոխարինել տվյալ ինտերվալը, դիստանս ինտերվալները լուծել կոնսոնանսների:
7. Հարմոնիկ մինոր և մաժոր տոնայնություններում անվանել կամ դաշնամուրով նվագել մեծացրած և փոքրացրած ինտերվալներ /տրիտոն և բնորոշ/, լուծել դրանք: Տվյալ



ինտերվալով /տրիտոն և բնորոշ/ որոշել տոնայնությունները /մաժոր և մինոր/, որոնցում կարող է դա հանդիպել:

8. Հանձնարարված հնչյունից և տոնայնության մեջ կառուցել ակորդներ, եռահնչյուններ /մաժոր, մինոր, մեծացված, փոքրացված/, մաժոր և մինոր սեքստակորդներ և կվարտսեքստակորդներ, Ռ/7 և դրա շրջվածքները, ձգտող սեպտակորդները: Տոնայնության մեջ և տվյալ հնչյունից կարողանալ լուծել Ռ/7-ը շրջվածքներով և ձգտող սեպտակորդները:
9. Կարդալ մաժորի և մինորի գամմաներ, որոշել ազգակից տոնայնությունները:

**«Լարային նվագարաններ» /կոնտրաբաս, տավիղ/,  
«Փողային և հարվածային գործիքներ»,  
«Ժողովրդական նվագարաններ»**

Դիմորդները պարտավոր են.

1. Գիտենալ նոտավորման ընդունված կանոնները և նշանները, մաժոր և մինոր տոնայնություններ՝ մինչև 4 նշան բանալիում:
2. Կառուցել և որոշել մաքուր, մեծ,փոքր ինտերվալներ, տրիտոններ, մեծացրած 2 և փոքրացրած 7 /հանձնարարված հնչյունից և տոնայնության մեջ/:
3. Հանձնարարված հնչյունից վեր և վար կառուցել մաժոր և մինոր եռահնչյուններ՝ շրջվածքներով, Ռ/7 և դրա շրջվածքները, ձգտող սեպտակորդներ:
4. Բանալիում մինչև 4 նշան տոնայնություններում կառուցել գլխավոր եռահնչյունները և դրանց շրջվածքները, Ռ/7 և շրջվածքները, ձգտող սեպտակորդներ:

### 3. Դաշնամուր

«Երաժշտության տեսություն» և «Երգչախմբավարություն» մասնագիտությունների գծով ընդունվողները ընդունելության քննություն են հանձնում «Դաշնամուր» առարկայից:

Դիմորդները պարտավոր են կատարել.

ա/ մեկ էտյուդ

բ/ եռաձայն բնույթի պոլիֆոնիկ ստեղծագործություն,

գ/ խոշոր ձևի մեկ ստեղծագործություն /ռոնդո, վարիացիաներ, սոնատի կամ կոնցերտի մեկ-երկու մաս/,

դ/ կանտիլենային բնույթի մեկ պիես:

# ՊԱՐԱՐՎԵՍ

Դիմորդը հանձնում է երեք քննություն՝

1. Պար
2. Հարցազրույց /բանավոր/
3. Հայոց լեզու\* /ոչ մրցութային/

**Պար** քննությանը դիմորդները պետք է ներկայացնեն մեկ հայկական և մեկ ժողբնորոշ պար, ինչպես նաև բեմադրեն փոքրիկ պարային հատված՝ հանձնաժողովի կողմից առաջարկվող երաժշտության ներքո:

**Պար** քննության ընթացքում դիմորդներին ներկայացվող պահանջներն ու գնահատման չափանիշներն են՝

- լսողություն և ռիթմի զգացողություն՝ 0 - 3 միավոր,
- կատարողական տեխնիկա՝ 0 - 5 միավոր,
- կերպարի զգացողություն՝ 0 - 4 միավոր
- պարային կոմպոզիցիա կառուցելու ունակություն՝ 0 - 8 միավոր

**Հարցազրույց** քննությունը կընթանա նախապես հայտարարված գրականության ցանկի և թեմաների շրջանակներում՝ հարցատոմսերով:

Հարցազրույցի ժամանակ դիմորդները կգնահատվեն հետևյալ չափանիշներով՝

1. նախապես հայտարարված գրականության ցանկի իմացություն՝ 0-6 միավոր
2. գրական ստեղծագործությունների հանրահայտ մեկնաբանությունների իմացություն՝ 0-7 միավոր
3. գրական ստեղծագործությունների ինքնուրույն մեկնաբանման կարողություն՝ 0-7 միավոր

Հավասար միավորների պայմաններում նախապատվությունը կտրվի պարային համույթների մասնակիցներին:

# ԴԻԶԱՅՆ

Դիմորդը հանձնում է երեք քննություն՝

1. Գունանկար
2. Գծանկար
3. Կոմպոզիցիա

**Գունանկար** առարկայի քննությանը հատկացվում է 4 ժամ, որի ընթացքում պետք է ավարտին հասցնել 2 առարկաներից կազմված նատյուրմորտը: Գույների միջոցով արտահայտել առարկայի ձևը, ծավալը, նյութը:

**Գծանկար** առարկայի քննությանը հատկացվում է 4 ժամ, որի ընթացքում մատիտների միջոցով արտահայտել նատյուրմորտի առարկաների, ձևը, ծավալը, նյութը:

**Կոմպոզիցիա** առարկայի քննությանը հատկացվում է 4 ժամ, որի ընթացքում ընտրել մեկ գույն, ստանալ դրա տարբեր երանգները և այդ երանգներով ստեղծել արժանատի կոմպոզիցիա:

# ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ

Ընդունվողները չպետք է ունենան կայուն խոսակցական, ինչպես նաև մասնագիտական գործունեությանը խանգարող՝ արտահայտված ֆիզիկական թերություններ:

Ընդունվողները պարտավոր են կատարել՝

ա/ երկու չափաձև առակ / Ա.Խնկոյան, Մ.Գոշ, Վ. Այգեկցի, Ի.Կոխլով/  
թարգմանություն//

բ/ արձակ ստեղծագործություն /փոքրիկ պատմվածք/

գ/ երկու բանաստեղծություն

Քննող հանձնաժողովը պետք է անցկացնի դիմորդների բեմական խոսքի, կեցվածքի և գրականության իմացության ստուգում